**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

ք. Երևան «18» 12 2025թ N3935 Լ

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՆԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման N 4 հավելվածի 19-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

**հ ր ա մ ա յ ու մ ե մ.**

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման N 4 հավելվածով հաստատված Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության նպատակային միջոցառման մոնիթորինգի իրականացման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
«____»_____
N _____Լ հրամանի

# ԿԱՐԳ

## ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՆԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման N 4 հավելվածով հաստատված՝ Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության նպատակային միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) մոնիթորինգի իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Մոնիթորինգի իրականացման պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն է (այսուհետ՝ Նախարարություն): Սույն կարգով սահմանված մոնիթորինգն իրականացվում է Նախարարության թեթև արդյունաբերության վարչության կողմից:

3. Սույն կարգը սահմանում է մոնիթորինգի հիմնական նպատակները, իրականացման եղանակները, գործիքակազմը և ժամկետները:

## 2. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԸ

4. Մոնիթորինգի իրականացման նպատակներն են.

1) Միջոցառման պայմանների պահպանման ապահովումը.

2) միջոցառման արդյունավետության գնահատումը.

3) ռիսկերի ու շեղումների վաղ հայտնաբերումն ու դրանց հիման վրա անհրաժեշտ ճշգրտումների կատարումը.

4) ոլորտի զարգացման համար տվյալների ապահովումը:

5. Մոնիթորինգն իրականացվում է անհրաժեշտությամբ պայմանավորված նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության և միջոցառման արդյունավետության գնահատման նպատակով՝ տարեկան առնվազն 1 անգամ:

6. Մոնիթորինգի իրականացման եղանակներն են.

1) նախնական մոնիթորինգ՝ իրականացվում է դիմում–հայտի ընդունման փուլում հիմք ընդունելով ֆինանսական կազմակերպության կողմից տնտեսավարողի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա նրա վարկունակության, վճարունակության, ինչպես նաև ստացվելիք վարկի նպատակային օգտագործման միջոցառման պայմաններին համապատասխանության գնահատման, վարկի տրամադրման բավարարման արդյունքները.

2) ընթացիկ մոնիթորինգ՝ իրականացվում է Միջոցառման իրականացման ամբողջ ընթացքում՝ նպատակ ունենալով վերահսկել շահառուների գործունեությունը և Միջոցառման պայմանների պահպանման ընթացքը: Մոնիթորինգը իրականացնելիս հիմք են ընդունվում ֆինանսական կազմակերպությունների կողմից ամենամսյա պարբերականությամբ ներկայացվող տվյալները, մասնավորապես՝ Միջոցառմամբ սահմանված Ձև 1-ով ներկայացվող հայտը և Ձև 2-ով ներկայացվող հաշվետվության ուսումնասիրման արդյունքները: Ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով ընթացիկ մոնիթորինգի ընթացքում կարող են իրականացվել հետևյալ գործողությունները՝

- համապատասխանության ստուգման նպատակով հարկային տվյալների ճշտում՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցումներ ուղղելու միջոցով.
- շահառուների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ ներառյալ ինվոյսների, ներմուծման հայտարարագրերի և այլ հիմնավորող փաստաթղթերի պահանջում և դրանց համեմատում ֆինանսական կազմակերպությունների տրամադրած տեղեկատվության հետ:

3) վերջնական մոնիթորինգ՝ իրականացվում է Միջոցառման ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում՝ Միջոցառման ընդհանուր արդյունավետության գնահատման նպատակով:

7. Ընթացիկ և վերջնական մոնիթորինգների ընթացքում կիրառվում է հետևյալ գործիքակազմը.

1) Ֆինանսական կազմակերպությունների կողմից Միջոցառմամբ սահմանված Ձև 1-ով (հայտ) և Ձև 2-ով (հաշվետվություն )ներկայացվող տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն.

2) Ֆինանսական կազմակերպություններից պարբերական տեղեկատվության հավաքագրում և հարցումներ.

3) Սույն կարգի Ձև-ով հաստատված տեղեկատվության լրացում շահառուների կողմից և վերջինիս վերլուծության իրականացում.

4) ամփոփ հաշվետվությունների կազմում.

8. Մոնիթորինգի ընթացքում ստացված բոլոր անձնական տվյալները պաշտպանվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

## 3. ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

9. Իրականացված մոնիթորինգի արդյունքների հիման վրա Միջոցառման ավարտից հետո թեթև արդյունաբերության վարչության կողմից կազմվում է համապարփակ ամփոփ հաշվետվություն, որը ներառում է Միջոցառման իրականացման ընթացիկ վիճակի վերլուծությունը, խնդիրների և դրանց պատճառների վերհանումը, Միջոցառման գնահատումը, ինչպես նաև Միջոցառման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ: Ամփոփ հաշվետվությունը կազմելիս հիմք են ընդունվում նախնական և ընթացիկ մոնիթորինգների, ինչպես նաև սույն կարգի Ձև-ով հաստատված տեղեկատվության վերլուծության արդյունքները:

10. Ամփոփ հաշվետվության կազմման ժամանակ Միջոցառման արդյունավետության և Միջոցառման նպատակներին համապատասխանության գնահատման համար կիրառվում են հետևյալ հիմնական ցուցանիշները (KPI).

1) Դիվերսիֆիկացիայի ցուցանիշներ՝

- ներգրավված նոր մատակարարների քանակը Միջոցառման ընթացքում (հատ).
- մատակարարների ընդհանուր թվի աճը՝ նախորդ ժամանակաշրջանի համեմատ (%).

- ներմուծման նոր երկրների քանակը (հատ).

2) Արտադրական և արտահանման ցուցանիշներ՝

- արտադրված արտադրանքի ծավալի աճը (%).
- արտահանման ծավալի աճը վերջին 365 օրերի կտրվածքով (%).
- նոր արտահանման շուկաներ մուտք գործելու դեպքեր:

3) Ֆինանսական կառավարման ցուցանիշներ՝

- Վարկի նպատակային օգտագործման համապատասխանության մակարդակ (%):

4) Հսկողության և ռիսկերի կառավարման ցուցանիշներ՝

- Ֆինանսական կազմակերպությունների կողմից ներկայացված տվյալների ամբողջականության, համապատասխանության և ժամկետների պահպանման մակարդակը (%):

5) Ծրագրի ընդհանուր արդյունավետության ցուցանիշներ՝

- Միջոցառման ընդհանուր արդյունավետության գնահատումը ըստ սահմանված չափոփոշիչների:

## 4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

11. Մոնիթորինգի ընթացքում ներկայացված փաստաթղթերում անճշտությունների, անհամապատասխանությունների կամ կեղծ տվյալների բացահայտման դեպքում տոկոսադրույքի սուբսիդավորման տրամադրումը դադարեցվում է: Պետության կողմից սուբսիդավորված տոկոսադրույքի ամբողջ գումարը վերադարձվում է պետական բյուջե՝ ֆինանսական կազմակերպության և շահառուի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով՝ եռամսյա ժամկետում, կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 283-Ն որոշումը:

Ձև

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՆԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՇԱՀԱՌՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Կազմակերպության անվանումը: _____

ՀՎՀՀ _____

Հեռախոս _____

Էլ. փոստ_____

2. ՎԱՐԿԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Ֆինանսական կազմակերպություն _____

Վարկի պայմանագրի համար: _____

Վարկի տրամադրման ամսաթիվ____ / ____ / 20__

Վարկի ավարտման ամսաթիվ ____ / ____ / 20__

Վարկի գումար _____ դրամ / արտարժույթ

Վարկի տոկոսադրույքը _____

Վարկի նպատակային ուղղություն _____

3. ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Վճարված մայր գումար (ընդհանուր)_____

Վճարված տոկոսագումարներ (ընդհանուր) _____

Սուբսիդավորված տոկոսագումար_____

Չսուբսիդավորվող տոկոսագումար _____

4. ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՀՈՒՄՔԻ ՏՎՅԱԼՆԵՐ

| Ներմուծված հումքի անվանում | Քանակ | Գին | Ծագման երկիր |
|---|---|---|---|
| | | | |

5. ՀՈՒՄՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Օգտագործված հումքի ծավալ _____

Արտադրված արտադրանքի տեսակներ _____

6. ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Վերջին 365 օրերի ընթացքում արտահանման ծավալներ _____

Միջոցառումից հետո իրականացված արտահանման ծավալներ _____

Արտահանման ուղղություններ _____

7. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Միջոցառման  արդյունավետությունը _____

Մինչև Միջոցառումը մատակարարներ (ըստ երկրների) _____

Նոր մատակարարներ _____

Միջոցառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտներ _____